Չորս տարի անընդմեջ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության նախաձեռնությամբ, Երեւանում, Նկարիչների միության շենքում, անցկացվում է ավանդական դարձած «ԱՐՏ-ԷՔՍՊՈ» արվեստների ցուցահանդեսը: Մարտի 3-4-

ը
տեղի
ունեցած
ցուցահանդեսի
շրջանակներում
իրենց
տարվա
գործունեությունն
ու
նոր
նախագծերն
էին
ներկայացրել
մշակույթի
ոլորտի
շուրջ
հինգ
տասնյակ
հայտնի եւ առաջատար
կազմակերպություններ
՝
թանգարաններ
,
գրադարաններ
,
կինոստուդիաներ
,
հասարակական
կազմակերպություններ
: Այս տարի միջոցառումը նվիրված էր ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից Երեւանը գրքի մայրաքաղաք հռչակելուն եւ գրքի հայրենական տպագրության 500-ամյակին:
Հոբելյանական
տարվա
առիթով
«
ԱՐՏ
-
ԷՔՍՊՈ
2012»-
ը
գրքի
ու
գրավոր
ժառանգության
խորհուրդն
ուներ

: Ցուցահանդեսի բ
ացման
արարողությանը
ներկա
էր
ՀՀ
նախագահ
Սերժ
Սարգսյանը, այլ պաշտոնական անձինք:

«ԱՐՏ-ԷՔՍՊՈ 2012» ցուցահանդես այցելեց եւ իր օրհնությունը բերեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Այս տարի «ԱՐՏ-ԷՔՍՊՈ»-ին մասնակցելու պատիվ ունեցավ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմին կից գործող Թբիլիսիի «Հայարտուն» կրթա-մշակութային

կենտրոնը: Ասենք, որ «Հայարտունը» միակ կազմակերպությունն էր արտերկրից, որ հրավիրված էր հայ արվեստների ցուցահանդեսին: «Հայարտունը» ներկայացնում էին կենտրոնի մշակույթի բաժնի պատասխանատու Լեւոն Չիդիլյանը եւ տեխնիկական պատասխանատու Վալերի Բադալյանը: Գործունեության ընդամենը 7-8 ամսվա ընթացքում կատարած աշխատանքները ցուցանմուշների տեսքով հպարտորեն տեղ էին գրավել հատկացված տաղավարի բոլոր ցուցադարակներին: «Հայարտան» անունով հրատարակված գեղարվեստական եւ հրապարակային գրականություն, բրոշյուրներ, բուկլետներ, աֆիշներ ու հայտարարություններ եւ բազմաթիվ լուսանկարներ, որոնք արտացոլում էին «Հայարտուն» մշակույթի կենտրոնում կազմակերպված հանդիպումների, կայացած միջոցառումների, անհատական եւ հավաքական ցուցահանդեսների մանրամասները:

Ուրախալի է, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը առանձնահատուկ հետաքրքրություն ցուցաբերեց «Հայարտան» տաղավարի նկատմամբ եւ խոստացավ ուշադրություն եւ աջակցություն Մայր Հայրենիքի կողմից:

Այցելուների կողմից մեծ էր հետաքրքրությունը «Հայարտանը» տարվող կրթա-մշակութային աշխատանքների՝ նախակրթարանի, հայերենի եւ հայոց պատմության ուսուցման, վիրտուալ համալսարանի լսարանների եռուզեռը պատկերող լուսանկարների նկատմամբ:

ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ այլ պաշտոնատար անձինք բարձր գնահատելով «Հայարտան» ծավալած բազմակողմանի եւ բեղմնավոր գործունեությունը, պատրաստակամություն հայտեցին ամեն կերպ աջակցելու Թբիլիսիի «Հայարտանը»: